

յողներուն հետ հաշուելով, 60,000ի կը հանեն : Այսպիսի գեղեցիկ քաղաք մը աւերակներու կոյտ դարձաւ, աղքատը և հարուստը մէկտեղ խառնուեցան, և հաղարաւոր մարդիկ առջի օրը իրենց հանգիստ վիճակը կը վայըէին, երկրորդ օրը դաշտերու մէջ ցրուեցան, յանկարծ զրկուած՝ չէ թէ միայն իրենց ունեցածէն, այլ և իրենց սիրելի ընտանիքներէն՝ այս սոսկալի կործանման պատճառաւ : Ողբալի պատահար, անպատմելի խեղճութիւն, և անըմբոնելի ուրտի կակիծ . որուն կարդալն ու լսելը ուրիշ բանի չօգներ, բայց եթէ աշխարհիս թշուառութեան ինչուան որ աստիճանի համար իմանալու . զորոնք մարդս իր վլխուն հանգիպած թշուառութիւններուն հետ բաղդատելով՝ կրնայ միխթարուիլ, ու տրտնջալէն զգուշանալ, որ ըլլայ թէ զոհ ըլլալով իր վիճակին վրայ, զիստուած բարկացնէ . մտածելով ալ մէկալ կողմանէ՝ որ եթէ Կայտուած զմէկը թշուառութեն մէջ կը ձգէ, եթէ այն մարդը առանց տրտնջալու սիրով տանելու ըլլայ, Կայտուած անոր փոխարէն միխթարութիւնը և հանգիստը հարիւրապատիկ պիտի տայ : Առ որեիցէ տեսակ թշուառութեան մէջ ինկած անձի մը մի միայն միխթարութիւնն այս է, մտածել թէ ամէն աշխարհիս աղետները պիտի ունենան իրենց փոխարէն միխթարութիւնները . և թէ թշուառութիւնը ժամանակաւոր է, իսկ թշուառութեան յաջորդող միխթարութիւնները յաւիտենական են :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՄԲ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՐ-ՕՐԵԿԱՆ քաղաքին մէջ Քողով. ու այթ անունով ամերիկացի բժիշկը բարակցաւի գէմաս կերպս գտեր է, որ այնպիսի հիւանդութիւն ունեցողները շափար շինելու գործարանները կը զպէ . հոն տեղի օգը և շափարի շոգին քանի մը ժամուան մէջ շատ առողջարար աղդեցութիւն մը կընեն առ հիւանդութեանս գէմ, որուն ինչուան հիմա բժշկական գարման մը գտնուած չէ :

1 Անգլ. մատենագիր մը : 2 ՏՃ. Վէրէմ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Անանիայի Շիրակունոյ յաղագս կատարման համարողարեան և կերպից հարցման :

Հարցունք Գ. — Այսպէս լուայ՝ ի վարդապետէն, եթէ գողեան մոլին՝ ի Մարկիանուն Տրիկլին և գողացան զիէս և զշորեոր գանձին . և մը տեալ գանձառուրացն՝ գտին չարիւր քսան և մի կենդինար, և երեք հազար և վեց հարիւր գահէկան : — Արդ գիտեան ի մնացելոց թէ ամենայն որշափ էլ գտնձն :

Լուծունք . — Կիցին 421 կենդինարն = ս, և գանձն = +, յորմէ կէս նորին $\frac{+}{2}$, և չորեսր մասն նորին $\frac{+}{4}$. որք միանդամայն ընդ 421 = ս կենդինարսն պարտին հաւասար գոլ գանձուն :

$$\text{Վասն որոյ } \frac{+}{2} + \frac{+}{4} + \text{ս} = + .$$

և Ծնչեալ զկոտորակսն մի առ մի բազմապատկելով զամնայն մասունս հաւասարմանն ի ձեռն հասարակաց յարանուանողին 4 . գանձն մը

$$2 + + + 4 \cdot \text{ս} = 4 +$$

զոր վերածեալ և փոխագրեալ, գտանեմք

$$4 \cdot \text{ս} = + :$$

Արդ որովհեան ըստ ենթագրութեանս է ս = 421, ապա 1664 = 4 × 421 = 4 +, և + = 4 + 4 × 421 = 1684 . և այս արտագրեալ ցուցանէ թէ լեալ է գանձն կենդինար հազար վեց հարիւր ութառուն և չորս . որ և է համեմատ ամենայն հանդամանաց առաջի եգեալ հարցմանս :

Սպառութեան : — Ըստ հանդամանաց հարցմանս է

$$\frac{+}{2} + \frac{+}{4} + \text{ս} = + .$$

որդ փոխանակելով զ + ընդ 1684ից, որ է գանձն՝ գտանեմք լեալ կէս նորին

$$\frac{+}{2} = \frac{1684}{2} = 842$$

$$\text{չորեսր մաս նորին } \frac{+}{4} = \frac{1684}{4} = 421$$

$$\text{որք միանդամայն ընդ մնացեալն } \frac{+}{1684} = 1$$

1 Յն. Դիբուլիս . 1 տ. Դիբուլիս . Հ. Յ. Աւանագուն . էր սենեակ կամ սրահ ուր կային էրեք թիկնաւոր բազմոցք, յորս ուտելին նախնիք յաւուրս տօնից :

Հ. Յ. Պ.